ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 57-Լ

«26» 06 2023 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության արարողակարգի վարչության պետ (այսուհետ նաև՝ Վարչություն) Հովհաննես Սոկրատի Կարապետյանի ազատման մասին ՀՀ գլխավոր դատախազի 2023 թվականի հունիսի 12-ի N 11/133-Ա հրամանը և այն, որ անհրաժեշտ է կատարել Վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կատարել Հ.Կարապետյանի կողմից՝ ՀՀ դատախազության արարողակարգի վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Վարչության պետի տեղակալ Աիդա Ղազարի Շահբազյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Ափրիկյան Մհեր - ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար,

Հանձնախմբի անդամներ՝

Մարտիրոսյան Հայկ - ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,

Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Հովհաննիսյան Անի -	ՀՀ դատախազության արարողակարգի վարչության գլխավոր մասնագետ,
Շոխոյան Հարություն -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի մասնագետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի հուլիսի 14-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ